ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/268

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 18.10.2021թ. թիվ 26/26-1/16961-2021 գրությամբ «Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 11.10.2021թ. թիվ ԳԵ/9199-2021 գրության հիման վրա, 18.10.2021թ. թիվ 26/26-1/16961-2021 գրությամբ նախաձեռնել է «Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Շին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/268 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:10-ին և 27.10.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.10.2021թ. թիվ ԳԵ/9199-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված մաքրության ծառայությունների մատուցման մրցույթին (ծածկագիր՝ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/08) «ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, առանց լիազորագրի էլեկտրոնային եղանակով ստորագրել է Մարինե Յավրումյանը, մինչդեռ ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում Դավիթ Պողոսյանը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի համաձայն՝ «ՇԻՆ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն վերջինս չի ներկայացրել շտկված տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ «ՇԻՆ» ՍՊԸ-ն այսուհետ չի դիտարկվում որպես ընթացակարգի մասնակից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/268 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:10-ին և 27.10.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/268 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/268 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Շին» ՍՊԸ-ն:

2. ՀՀ կադաստրի կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 11.10.2021թ. թիվ ԳԵ/9199-2021 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որպես շտկում Ընկերությանն ուղղված գրությունը:

3. Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ծանուցած լինելու փաստը հավաստող ապացույցը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.10.2021թ. թիվ 26/26-1/16961-2021 գրությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 11.10.2021թ. թիվ ԳԵ/9199-2021 գրությունը և գործով առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից

ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով***, ***գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Շին» ՍՊԸ-ն:

ՀՀ կադաստրի կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 11.10.2021թ. թիվ ԳԵ/9199-2021 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որպես շտկում Ընկերությանն ուղղված գրությունը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն վերը նշված գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը. «ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, առանց լիազորագրի էլեկտրոնային եղանակով ստորագրել է Մարինե Յավրումյանը, մինչդեռ ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում Դավիթ Պողոսյանը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի համաձայն՝ «ՇԻՆ» ՍՊԸ-ին տրվել է մեկ

աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն վերջինս չի ներկայացրել շտկված տարբերակը»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա նյութերը, արձանագրում եմ, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ծանուցած լինելը, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերությանը՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համապատասխան գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկելը, այսինքն՝ Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում պատշաճ ծանուցված լինելը, քանի որ ծանուցումն ուղարկելուց հետո է միայն հոսում 1 աշխատանքային օր ժամկետը, որը և չպահպանելու դեպքում գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի դրույթով, մերժում է մասնակցի հայտը, որի արդյունքում ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ Ընկերությանը էլեկտրոնային եղանակով պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.10.2021թ. թիվ 26/26-1/16961-2021 գրությամբ «Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**